ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մայիսի 2012թ. **N_-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ. հաստատված կարգի 32–րդ կետով, հաշվի առնելով Հովհաննես Էլբակյանի և Անի Հակոբյանի դիմումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Հովհաննես Էլբակյանի և Անի Հակոբյանի սեփականությունը հանդիսացող Երևանի Արաբկիր 27-րդ փողոցի հ.6/2 հասցեում գտնվող 104.8քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.03.2007թ. հ.2240247 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Սարալանջի փողոցին հարակից տարածքում գտնվող 104.8քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հովհաննես Էլբակյանը և Անի Հակոբյանը դիմել են Երևանի քաղաքապետարան սեփականության իրավունքով իրենց պատկանող Արաբկիր 27-րդ փողոցի հ.6/2 հասցեում գտնվող 104.8քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.03.2007թ. հ.2240247 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Սարալանջի փողոցին հարող տարածքում գտնվող 104.8քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու խնդրանքով:

Համաձայն աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության եզրակացության, քննարկվող հողամասը Սարալանջի փողոցին հարող հատվածում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելու հանգամանքը պայմանավորված է փոխանակման ներկայացված հողամասին կից, աջ և ձախ կողմերում նույն քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող 500,0 քմ և 112,0քմ մակերեսներով հողամասերը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.03.2007թ. հ. 2240246 և 10.09.2009թ. հ.2767247 վկայականներ) միմյանց ամրակցելու, քաղաքաշինական տեսակետից ընդհանուր երեք հողամասերի լիարժեք կառուցապատում իրականացնելու, ինչպես նաև մոտեցման ճանապարհի կազմակերպման համար:

Սարալանջի փողոցին հարող տարածքում փոխանակվող 104.8քմ մակերեսով հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 4-րդ գոտում:

Ելնելով վերոգրյալից «Հողամասի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ